ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

---

ՈՐՈՇՈՒՄ N 399-Ա

« 16 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024Թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ», «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի
«16» դեկտեմբերի 2024թ. N 399 որոշման

# ՊԼԱՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ. | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | **I. ՆԳՆ ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | |
| | ***1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն*** | | | | | |
| | ***1.1 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն*** | | | | | |
| 1.1.1 | Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով ՀՀ Վայոց ձորի մարզում պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը | Մարտ, սեպտեմբեր | ՄՓՎ պետ | Մարզի ղեկավար կազմ | | |
| | ***2. Ընդհանուր պատրաստություն*** | | | | | |
| 2.1 | Մասնակցություն պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ՔՊ հարցերով պատասխանատուների հետ սեմինար պարապմունքների անցկացմանը | Յուրաքանչյուր կիսամյակ | ՄՓՎ պետ | Մարզպետի աշխատակազմի, մարզային փրկարարական վարչության ներկայացուցիչներ | | |
| | ***3. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ*** | | | | | |
| 3.1 | Մասնակցություն ռազմական դրության ժամանակ ՔՊ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ, Պաշտպանության նախարարությանը չկցագրված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 3.2 | Մասնակցություն զորահավաքային նախապատրաստության հարցերով ՆԳՆ ՓԾ | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տարածքային ստորաբաժանումներին մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը | | | | | |
| | **4.Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | |
| 4.1 | Մասնակցություն ՀՀ քարաթափումների, հեղեղումների կանխարգելմանն ուղղված որոշակի պարբերականությամբ մոնիտորինգ անցկացնելու, կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և համապատասխան միջոցառումներ ներդնելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 12-ի N 577-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատանքներին | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանում ներ | | |
| 4.2 | Մասնակցություն ՀՀ կառավարության 10.11.2011թ. N 1582-Ն որոշման համաձայն՝ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների տվյալների ամփոփմանն ու ՀՀ վարչապետի 10.04.2012թ. թիվ 325-Ա որոշմամբ ստեղծված հանրապետական հանձնաժողովի անդամների համաձայնեցման ներկայացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանում ներ | | |
| | **5. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | |
| 5.1 | Մասնակցություն ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանում ներ | | |
| | 1) Հայաստանի Հանրապետության համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում | | | | | |
| | 2) Ավստրիական և Հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում առաջին արձագանքման կամավորական ծառայության ինստիտուցիոնալիզացում» | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | (VOLFIRE) ծրագրի շրջանակներում նոր կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում | | | | | |
| | **6. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | |
| 6.1 | Մասնակցություն Աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման և ներդրման ուղղությամբ մեթոդական աջակցության ցուցաբերմանը | Տարվա ընթացում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 6.2 | Մասնակցություն ՓԾ տնօրենի 09.06.2022թ. Ն/11.4.3/28347-2022 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 02.06.2022թ. N 803-Լ որոշմամբ հաստատված ՄԱԿ Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024թթ. գործողությունների ազգային երկրորդ ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի համապատասխան կետերով սահմանված ՓԾ կողմից միջոցառումների իրականացման ապահովմանը | Տարվա ընթացում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | **II. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | |
| | **1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն** | | | | | |
| | **1.1 Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն** | | | | | |
| 1.1.1 | «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով | 13.05 | Մարզային փրկարարական վարչություն | Մարզային փրկարարական վարչություն, Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ, մարզային ծառայություններ, Եղեգնաձոր համայնք | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2. Շտաբային ուսումնավարժություն** | | | | | |
| 2.1 | «Փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների իրականացումը Հեր-Հերի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում» թեմայով | 23.10 | Մարզային փրկարարական վարչություն | Մարզային փրկարարական վարչություն, մարզի արտակարգ իրավիճակների և տարահանման հանձնաժողովներ, մարզային ծառայություններ, քաղաք Վայք, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրեր | | |
| 2.2 | Վայոց ձորի մարզի համայնքների կողմից շտաբային ուսումնավարժությունների անցկացում | Տարվա ընթացքում | Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ | Համայնքների ղեկավար կազմեր | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ ՄՓՎ ներկայացուցիչներ | |
| | 1)«Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սելավների առաջացման դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 18.04 | ՄՓՎ պետ, Եղեգնաձոր համայնքի ղեկավար | Եղեգնաձոր համայնքի ղեկավար կազմ | | |
| | 2)«Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքի առաջացման դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 14.05 | ՄՓՎ պետ, Արենի համայնքի ղեկավար, | Արենի համայնքի ղեկավար կազմ | | |
| | 3)«Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտ-պանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 19.08 | ՄՓՎ պետ, Ջերմուկ համայնքի ղեկավար | Ջերմուկ համայնքի ղեկավար կազմ | | |
| | 4)<<Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը անտառային հրդեհների առաջացման դեպքում>> թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 15.10 | ՄՓՎ պետ, Վայք համայնքի ղեկավար, | Վայք համայնքի ղեկավար կազմ | | |
| | 5)«Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտ-պանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 25.11 | ՄՓՎ պետ, Եղեգիս համայնքի ղեկավար | Եղեգիս համայնքի ղեկավար կազմ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.3 | Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության փրկարարական ծառայողների հետ շտաբային ուսումնավարժությունների անցկացում: | Կիսամյակը 1 անգամ | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | **3. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | |
| 3.1 | <<Հրդեհաշիջման, որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ-ի մասնակի փլուզված մասնաշենքում>> | 11.06 | Մարզային փրկարարական վարչություն | Վայքի ՀՓՋ, Լիդեր Կոմպլեքս ՍՊԸ-ի անձնակազմ, «Վայոց ձոր» ԳԳՄ Վայքի ՏՏ, ՀՀ ոստիկանության Վայքի բաժին, «ՀԷՑ» ՓԲԸ Վայքի տեղամաս, Վայքի ԲՄ | | |
| | **4. Օբյեկտային վարժանք** | | | | | |
| 4.1 | Մարզի թվով 2 կազմակերպության կողմից օբյեկտային վարժանքների անցկացում | Տարվա ընթացքում | Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ, կազմակերպության տնօրեն | Կազմակերպության ղեկավար կազմ | Կազմակերպության անձնակազմ, ՄՓՎ ներկայացուցիչներ | |
| | <<Ուժեղ երկրաշարժի դեպքում անձնակազմի և աշակերտների պաշտպանության կազմակերպում>> թեմայով | 22.04 | Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ պետ, Եղեգնաձորի ավագ դպրոց | Եղեգնաձորի ավագ դպրոց, ՄՓՎ ներկայացուցիչներ | |
| | | 20.11 | Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ պետ, Վայքի ավագ դպրոց | Վայքի ավագ դպրոց, ՄՓՎ ներկայացուցիչներ | |
| | **5. Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | |
| | Վայոց ձորի մարզի թվով 6 կազմակերպությունների կողմից հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | Տարվա ընթացքում | Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ, կազմակերպության տնօրեն | Կազմակերպության ղեկավար կազմ | Կազմակերպության կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչներ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5.1 | 1)««Վայքի ՃՇՇ» ՓԲԸ անձնակազմի գործողությունները Սարավան-«Զանգեր» ավտոճանապարհին առաջացած ձնաբքի դեպքում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 26.02 | ՄՓՎ պետ, «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն | «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ ղեկավար կազմ | Կազմակերպության կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչներ | |
| | 2)«Հետախուզական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը Եղեգնաձոր քաղաքի «Նոր ավան» թաղամասի հոսանքազրկման դեպքում» թեմայով | 27.03 | ՄՓՎ պետ, ՀԷՑ ՓԲԸ «Եղեգնաձորի» մասնաճյուղի էլ. ցանցի տնօրեն | ՀԷՑ ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի Եղեգնաձորի էլ. ցանցի ղեկավար կազմ | ՀԷՑ ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի Եղեգնաձորի էլ. ցանցի կազմավորումներ, ՄՓՎ անձնակազմ | |
| | 3)«Գազի արտահոսք բազմաբնակարան շենքի աստիճանավանդակում հրդեհի բռնկմամբ» թեմայով | 15.04 | ՄՓՎ պետ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր» ԳԳՄ տնօրեն | «Վայոց ձոր» ԳԳՄ Եղեգնաձորի ՏՏ անձնակազմ | Եղեգնաձորի ՏՏ անձնակազմ | |
| | 4)«Արտահոսք ստորգետնյա բակային գազատարից հրդեհի բռնկմամբ» թեմայով | 22.05 | ՄՓՎ պետ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր» ԳԳՄ տնօրեն | «Վայոց ձոր» ԳԳՄ Վայքի ՏՏ անձնակազմ | Վայքի ՏՏ անձնակազմ | |
| | 5)«Գազի արտահոսք բազմաբնակարան շենքի աստիճանավանդակում հրդեհի բռնկմամբ» թեմայով | 25.06 | ՄՓՎ պետ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր» ԳԳՄ տնօրեն | «Վայոց ձոր» ԳԳՄ Ջերմուկի ՏՏ անձնակազմ | Ջերմուկի ՏՏ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 6)«Վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացումը Եղեգնաձոր քաղաքի ներքին ջրակմատակարարման ցանցի վթարի դեպքում» թեմայով | 27.11 | ՄՓՎ պետ, «Վեոլիա ջուր» ՓԲԸ Եղեգնաձո րի տեղամասի տնօրեն | «Վեոլիա ջուր» ՓԲԸ Եղեգնաձորի տեղամասի ղեկավար կազմ | Կազմակեր պության կազմավորում ներ, ՄՓՎ ներկայացուցիչ ներ | |
| 5.2 | Վայոց ձորի մարզի կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | Ամսվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանում ներ | | |
| | Հրդեհաշիջումը Գնդեվազի միջնակարգ հանրակրթական դպրոցում | 12.03 | ՄՓՎ պետ | Ջերմուկի ՀՓՋ | Գնդեվազի միջնակարգ դպրոց | |
| | Հրդեհաշիջումը «Ջերմուկի Ստեփանյաններ» ՍՊԸ-ում (ԱԳԼՃԿ ) | 17.06 | ՄՓՎ պետ | Ջերմուկի ՀՓՋ | Ջերմուկի «Ստեփանյան ներ» ՍՊԸ | |
| | Հրդեհաշիջումը Կեչուտի «Զատիկ » մանկապարտեզում | 21.08 | ՄՓՎ պետ | Ջերմուկի ՀՓՋ | Կեչուտի «Զատիկ» մանկապար տեզ | |
| | Հրդեհաշիջումը «Էկոֆարմ» ՍՊԸ անասնապահական համալիրում | 17.10 | ՄՓՎ պետ | Ջերմուկի ՀՓՋ | «Էկոֆարմ» ՍՊԸ | |
| | Հրդեհաշիջման և տարահանման աշխատանքների կազմակերպումը դպրոցում | 20.03 | ՄՓՎ պետ | Եղեգնաձորի ՀՓՋ | Եղեգիս բնակավայրի միջնակարգ դպրոց | |
| | Հրդեհաշիջման և տարահանման աշխատանքների կազմակերպումը հիվանդանոցում | 20.05 | ՄՓՎ պետ | Եղեգնաձորի ՀՓՋ | Վայոց ձորի բժշկական կենտրոն | |
| | Հրդեհաշիջման և տարահանման աշխատանքների կազմակերպումը դպրոցում | 18.09 | ՄՓՎ պետ | Եղեգնաձորի ՀՓՋ | Շատին բնակավայրի միջնակարգ դպրոց | |
| | Հրդեհաշիջումը առևտրի բազայի պահեստային շինությունում | 26.11 | ՄՓՎ պետ | Եղեգնաձորի ՀՓՋ | Եղեգնաձորի «Ֆարմատ ԱՍՍ» ՍՊԸ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հրդեհաշիջումը Վայքի հիմնական դպրոցի կաթսայատանը | 04.03 | ՄՓՎ պետ | Վայքի ՀՓՁ | Վայքի հիմնական դպրոց | |
| | Հրդեհաշիջումը «Ս. Ավետյան և ընկերներ ՍՊԸ» գազալցակայանի ճնշման կետում | 25.06 | ՄՓՎ պետ | Վայքի ՀՓՁ | «Ս. Ավետյան և ընկերներ ՍՊԸ» գազալցակայան | |
| | Հրդեհաշիջումը Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի միջնակարգ դպրոցի գրադարանում | 26.09 | ՄՓՎ պետ | Վայքի ՀՓՁ | Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի միջնակարգ դպրոց | |
| | Հրդեհաշիջումը Վայքի համայնքապետարանի նիստերի դահլիճում | 16.12 | ՄՓՎ պետ | Վայքի ՀՓՁ | Վայքի համայնքապետարանի նիստերի դահլիճ | |
| 5.3 | ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | 01-04.03 | Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Ուսումնական հաստատությունների անձնակազմ | |
| 5.4 | «Աղետներին դիմակայունության օր» խորագրով համապետական միջոցառումների անցկացում | 06-11.12 | ՄՓՎ պետ | Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան կազմակերպություններ |
| 5.5 | Շչակների գործարկմամբ «Ազդարարում, տարահանում, պատսպարում» թեմայով գործնական պարապմունքների անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համայնքներ և ուսումնական հաստատություններ | |
| | **6. Ընդհանուր պատրաստություն** | | | | | |
| | Վայոց ձորի մարզային ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՔՊ ծառայություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ների շտաբի պետեր | |
| 6.1 | • «ՔՊ դերը երկրի պաշտպանության միջոցառումների ընդհանուր համակարգում, ՔՊ ղեկավարումը Հայաստանի Հանրապետությունում»:<br>• «ՔՊ համակարգի պատրաստականության բերման կարգն ու միջոցառումները»: | 19.03 | ՄՓՎ պետ | ԲՊ բաժնի պետ | ՔՊ ծառայություն ների շտաբի պետեր | |
| | • «ՔՊ պլաններին ներկայացվող հիմնական պահանջները, դրանց մշակման, համաձայնեցման և հաստատման կարգը»:<br>• «ՔՊ ծառայությունների, ՔՊ կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը»:<br>• «ՔՊ ինժեներատեխնիկական միջոցառումները»: | 19.06 | ՄՓՎ պետ | ՃԿԿ պետ | ՔՊ ծառայություն ների շտաբի պետեր | |
| | • «Կազմակերպությունների (տնտեսության օբյեկտների) գործունեության կայունության բարձրացման հիմնական ուղիները»:<br>• «Տարահանման մարմինները, դրանց կառուցվածքն ու խնդիրները»:<br>• «Տարահանված բնակչության կենսապահովման կազմակերպումը»: | 24.09 | ՄՓՎ պետ | ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ | ՔՊ ծառայություն ների շտաբի պետեր | |
| | • «ԱԻ-ում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգը»:<br>• «ՀՀ տարածքում ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության դեպքում բնակչության ազդարարումն ու տեղեկատվության տրամադրման կարգը: Բնակչության գործողությունները ազդարարման ազդանշաններով» | 10.12 | ՄՓՎ պետ | ԲՊ բաժնի պետ, ՃԿԿ և ԲՊ բաժնի ավագ հրահանգիչներ | ՔՊ ծառայություն ների շտաբի պետեր | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **7. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | |
| 7.1 | ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում գարնանային վարարումների ժամանակահատվածում գետերի հոսքերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրություն և հավաքագրում, Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կանխատեսումների հիման վրա հրատապ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Մարտ-հունիս | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | **8. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | |
| 8.1 | Ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության վիճակի ուսումնասիրությունների անցկացման ընթացքի վերաբերյալ զեկույցի ներկայացում | 16.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.2 | Վայոց ձորի մարզի բազմաբնակարան շենքերի, մասնավոր տների, կազմակերպությունների նկուղային հարկերի վիճակի ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: | Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը | | | | |
| | **9. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | |
| 9"1 | ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի ՄՓՎ ստորաբաժանումների ծառայողների և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության և գիտության ոլորտի մասնագետների հետ կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-17 տարեկան) հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացի համակարգում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | ՀՀ Վայոց ձորի մարզում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև առաջնությունների կազմակերպում և անցկացում | Ապրիլ | | | | |
| 9"2 | ՓԾ տնօրենի 21.08.2020թ. Ն/11.3.1/37130-2020 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով սպասարկման տարածքներում նոր հիդրանտների տեղադրման, վնասված և ասֆալտապատման հետևանքով գետնի տակ մնացած հրշեջ հիդրանտների վերանորոգման, իրենց ձևով և տրամագծով հրշեջ | 04.04<br>04.07<br>03.10<br>26.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ավտոմեքենաների մարտավարատեխնիկական տվյալներին չհամապատասխանող հիդրանտները գործածելի դարձնելու և գյուղական բնակավայրերում ջրավազանների կառուցման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | | | | | |
| 9"3 | ՓԾ տնօրենի 09.12..2021թ. Ն/11.1.3/63770-2021 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ-ում առկա աղբավայրերում հակահրդեհային միջոցառումների իրականացում և տեղեկատվության ներկայացում | Մինչև 23.05 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանում ներ | | |
| | **10. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | |
| 10.1 | ՀՀ Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլանի մշակում | Մինչև 23.11 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանում ներ | | |
| 10.2 | ՓԾ տնօրենի 29.08.2022թ. Ն/11.1.1/42919-2022 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով մեթոդական աջակցություն բարձր ռիսկայնության օբյեկտներին աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման գործում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանում ներ | | |
| 10"3 | Համայնքների և կազմակերպությունների ՔՊ պլանների, պլան-ժամանակացույցերի ճշգրտում | Մինչև 11.03 | ՄՓՎ պետ | Համայնքապետա րաններ և կազմակերպություն ներ | ՄՓՎ ստորաբաժա նումներ | |
| 10"4 | «Վայոց ձորի մարզի քաղաքացիական պաշտպանության պլան»-ի ճշգրտում | Մինչև 20.06 | ՀՀ Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա նումներ | Մարզպետի աշխատակազմի համապա տասխան վարչություններ, ՄՓՎ | |
| 10"5 | «Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման պլան»-ի ճշգրտում | Մինչև 29.08 | ՀՀ Վայոց ձորի մարզի տարահան | Տարահանման հանձնաժողով | Մարզպետի աշխատակազմի համապատաս խան | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ման հանձնաժո ղովի նախագահ | | վարչություններ, ՄՓՎ | |
| 10"6 | «Վայոց ձորի մարզի «Մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» պլանի ճշգրտում | Տարվա ընթացքում | ՀՀ Վայոց ձորի մարզի տարահան ման հանձնաժո ղովի նախագահ | Տարահանման հանձնաժողով | Մարզպետի աշխատակազմ ի համապատաս խան վարչություններ, ՄՓՎ | |
| 10"7 | «Վայոց ձորի մարզի «Մարզի արտակարգ իրավիճակներում գործելու աղետների ռիսկի կառավարման պլաններ»-ի ճշգրտում | Տարվա ընթացքում | ՀՀ Վայոց ձորի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա նումներ | Մարզպետի աշխատակազմ ի համապատաս խան վարչություններ | |
| | **11. Զորահավաքային պատրաստություն** | | | | | |
| 11.1 | Զորահավաքային պատրաստության միջոցառումներ | Առանձին պլան-ժամանակա ցույցով | ՄՓՎ պետ | ՄՓՎ պետի տեղակալ | Համապատաս խան Զինկոմիսա րիատներ | |
| | ***ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ,*** <br> ***փ/ծ գնդապետ Հ. Սարգսյան*** | | | | | |